«ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-255-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության մեջ «պետական» բառը փոխարինել «հանրային» բառով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հատուկ քննչական ծառայությունում ծառայողը հանդիսանում է ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ:»

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության մեջ «պետական» բառը փոխարինել «հանրային» բառով:

Հոդված 4. 6-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.Հատուկ քննչական ծառայության պաշտոնի կարող են նշանակվել պարտադիր զինվորական ծառայություն չանցած, սակայն օրենքով նախատեսված կարգով ու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված անձինք:»:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում «ենթարկվում է միայն» բառերից հետո լրացնել «ՀՀ Սահմանադրությանը և» բառերով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «պետական ծառայության հատուկ տեսակ,» բառերը փոխարինել «հանրային ծառայության տեսակ,» բառերով:

Հոդված 2. 13-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ կետով.

1.1) կատարում է աշխատանքի բաժանում իր համակարգման ներքո գտնվող քննչական ստորաբաժանումների ծառայողների միջև.:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Քննչական կոմիտեում պաշտոնի կարող են նշանակվել պարտադիր զինվորական ծառայություն չանցած, սակայն օրենքով նախատեսված կարգով ու հիմքով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված անձինք:»:

Հոդված 4. Օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) կենսագրական տվյալներ պարունակող կադրերի հաշվառման անձնական թերթիկ, որը լրացվում է անձամբ՝ հարցերի վերաբերյալ սպառիչ պատասխաններով՝ կից ներկայացնելով դրանում նշված տեղեկությունները հավաստող այլ փաստաթղթեր:»:

Հոդված 5. Օրենքի 22.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Քննչական կոմիտեի նախագահը կադրերի ռեզերվում գտնվող քննչական կոմիտեի ծառայողներին կարող է նշանակել հավասարազոր կամ ավելի բարձր պաշտոնում, իսկ ծառայողի համաձայնությամբ՝ նաև ցածր պաշտոնում:»:

Հոդված 6. Օրենքի 25-րդ հոդվածում՝

- 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,
- 7-րդ մասի «Ատեստավորումը սույն օրենքով սահմանված կարգով հետաձգվելու և վերապատրաստման գործուղվելու» բառերը փոխարինել «Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվելու» բառերով:

Հոդված 7. Օրենքի 28.1-րդ հոդվածի 1-ին մասում «շնորհակալագրով, հուշանվերով, դրամական պարգևատրմամբ» բառերը փոխարինել «սույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ և 7-րդ կետերով նախատեսված խրախուսման միջոցներով» բառերով:

Հոդված 8. Օրենքի 33-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 33. Քննչական կոմիտեի ծառայողին այլ պաշտոնի փոխադրելը

1. Քննչական կոմիտեի նախագահը ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առանց քննչական կոմիտեի ծառայողի ցանկության, կարող է նրան փոխադրել զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ առաջխաղացման կարգով՝ այլ պաշտոնի:
2. Քննչական կոմիտեի ծառայողին չի կարելի ավելի ցածր պաշտոնի փոխադրել, բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է քննչական կոմիտեի ծառայողի դիմումի հիման վրա.

2) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է որպես կարգապահական տույժ.

3) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է սույն օրենքի 35-րդ հոդվածի 14-րդ մասի 5-րդ կետով սահմանված որոշման հիման վրա.

4) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է հաստիքները կրճատվելիս քննչական կոմիտեի ծառայողի դիմումի հիման վրա:»:

Հոդված 9. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գործուղվել» բառից հետո լրացնել «այլ քննչական մարմին» բառերը, իսկ «պատճառով» բառից հետո՝ «կամ քննչական խմբում ընդգրկվելու

նպատակով» բառերը,

2) 4-րդ մասի «գործուղվել» բառից հետո լրացնել «, բացառությամբ քննչական խմբում ընդգրկվելու նպատակով այլ քննչական մարմին կամ մարզային քննչական ստորաբաժանման ներսում գործուղվելու դեպքերի» բառերը:

Հոդված 10. Օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում «զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալները» բառերից առաջ լրացնել «հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության պետի տեղակալը» բառերը:

Հոդված 11. Օրենքի 36.1-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ և երրորդ նախադասությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Աշխատանքային ժամերին Հայաստանի Հանրապետության տարածքում միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ մինչև հինգ օր տևողությամբ բացակայելու վերաբերյալ գործուղման հրամանը կայացնում է քննչական կոմիտեի նախագահի համապատասխան տեղակալը: Հինգ օրից ավել ժամկետով կամ Հայաստանի Հանրապետությունից դուրս իրականացվող միջոցառումների դեպքում գործուղման հրամանը կայացնում է քննչական կոմիտեի նախագահը:»:

Հոդված 12. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: